Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 401 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 366- Ա
որոշման

«ՎԱԼԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀՈԱԿ-Ի ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կրթական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է կառուցել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» Համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր շենքը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնք, կրթական

6.	Ծրագրի բյուջեն	347,972,463 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» Համայնքային ոչ առևտրային կազմակերություն, Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Չարենցի փողոց, 154, ՀՎՀՀ՝ 08604654
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 31-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի նոր շենքի կառուցում՝ 344,527,192 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 31-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում: 2) նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի նոր շենքի կառուցման տեխնիկական հսկողության աշխատանքներ՝ 3,445,271 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 31-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կիրականացվեն արտաքին աստիճանների կառուցման, տարածքի արտաքին լուսավորության, տեսահսկման համակարգերի տեղադրման, շանթապաշտպանության, արտաքին կոյուղու, ցանկապատման, կանաչապատման, հատակների և ներքին հարդարման աշխատանքներ՝ 344,527,192 դրամի չափով: 2) տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 3,445,271 դրամի չափով:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, Սևանի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ